Հավելված 1. Հարցաթերթ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ-Ա

Ուս. տարի _____ *Կիսամյակ* _____

Կրթ. աստիճանը բակալավր ☐ մագիստրոս ☐

Ֆակուլտետ/ինստիտուտ/կենտրոն _____

Կրթական ծրագիր _____

Դասընթաց/ուսումնական մոդուլ _____

Պարապմունքի ձևը՝ Դասախոսություն

Դասախոս _____

Սիրելի՛ ուսանող, հրավիրում ենք մասնակցելու դասընթացի և դասախոսի գնահատման հարցմանը՝ լրացնելով սույն առցանց հարցաթերթը: Տվյալ հարցման նպատակն է որոշել Ձեր բավարարվածությունը տվյալ դասընթացով և դրա մատուցման որակով: Խնդրում ենք բոլոր հարցերին պատասխանել անկեղծ և գնահատել անաչառ, քանի որ հարցման արժանահավատությունը պայմանավորված է Ձեր օբյեկտիվ պատասխաններով: Ձեր անաչառ գնահատումը և կարծիքը շատ կարևոր են դասընթացի և դրա դասավանդման որակի շարունակական բարելավման համար:

Հարցումն անանուն է, իսկ ստացված արդյունքները ներկայացվելու են միայն ընդհանրական տեսքով:

Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն գնահատվող դասընթացի և դասախոսի մասին ներքոնշյալ հարցապնդումներին՝ համապատասխան այունակում կատարելով նշում՝ + կամ √ :

Հարցաշարը լրացնելու համար Ձեզանից կպահանջվի ընդամենը 20 րոպե:
Շնորհակալություն:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

	Հարցապնդում / Հնարավոր պատասխան (√)	համաձայն չեմ	մասամբ համաձայն չեմ	և՛ համաձայն եմ - և՛ համաձայն չեմ	համաձայն եմ մասամբ	համաձայն եմ
1	Դասընթացի օրացուցային պլանը՝ յուրաքանչյուր դասի մանրամասն նկարագրությամբ տրամադրված էր կիսամյակի սկզբում					
2	Դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները հստակ և հասկանալի էին					
3	Դասախոսության բովանդակությունը և նյութի մատուցման ձևը նպաստում էին դասընթացով նախատեսված գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը					
4	Լսարանում մատուցվող հիմնական նյութը բավարար էր դասընթացը հաջողությամբ յուրացնելու համար					
5	Հանձնարարված առաջադրանքները նպաստում էին նյութի յուրացմանը					
6	Հանձնարարված գրականությունն արդիական էր, նպաստում էր նյութի առավել խոր ընկալմանը և տրված առաջադրանքների կատարմանը					
7	Գնահատման պահանջները և չափանիշները նախապես հայտնի էին և լիովին հասկանալի					

8	Դասընթացն ապահովված էր ժամանակակից տպագիր և էլեկտրոնային ուսումնական և մեթոդական նյութերով					
9	Դասընթացի ավարտին ձեռք եմ բերել դասընթացով նախատեսված գիտելիքները և հմտությունները					
10	Ընդհանուր առմամբ բավարարված եմ դասընթացից ստացած գիտելիքներով					
Գնահատեք Ձեր ծանրաբեռնվածությունը դասընթացի ուսումնասիրման ընթացքում.		խիստ ցածր	Ցածր փոքր	Համարժեք ընդունելի	Մեծ բարձր	չափից ավելի

Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

ԴԱՍԱԽՈՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

	Հարցապնդում / Պատասխան (+ կամ √)	համաձայն չեմ	մասամբ համաձայն չեմ	և՛ համաձայն եմ - և՛ համաձայն չեմ	համաձայն եմ մասամբ	համաձայն եմ
1	Դասախոսը ցուցաբերում էր մասնագիտական բարձր պատրաստվածություն և պատրաստված էր դասերին					
2	Դասընթացի նյութը մատուցում էր պարզ և մատչելի՝ մասնագիտական բառապաշարով					
3	Կիրառում էր դասավանդման և ուսուցման բազմազան և նորարարական ինտերակտիվ մեթոդներ (ինքնուրույն և խմբային աշխատանքներ, դեպքերի վերլուծություն, դերային խաղեր, քննարկումներ և այլն)					
4	Դասախոսն արդյունավետ և առանց կարգապահական խախտումների էր անցկացնում դասը					
5	Դասը վարում էր հետաքրքիր՝ նպաստելով ուսանողների ակտիվ մասնակցությանը դասին					
6	Դասախոսը սպառիչ պատասխաններ էր տալիս ուսանողների հարցերին					

7	Ժամանակ էր հատկացնում դասից դուրս խորհրդատվության և հարցերին պատասխանելու համար					
8	Բարյացակամ և հարգալից էր ուսանողների նկատմամբ, պահպանում էր մասնագիտական էթիկան					
9	Ուսանողի գիտելիքները և կարողությունները գնահատում էր օբյեկտիվ՝ սահմանված չափանիշներին համապատասխան					
10	Ընդհանուր առմամբ բավարարված եմ դասախոսի աշխատանքով					

Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

_____